ԳՈՐԾՈՂ ԱՆՁԸ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ. ԷՄՊԻՐԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՓՈՐՁ

Մանուսյան Ս.Հ.(ԵՊՀ, Երևան, ՀՀ)

manusyan@gmail.com,

Գրիգորյան Ա.Կ.(ԵՊՀ, Երևան, ՀՀ)

anigrigoryanpsy@gmail.com

Հոդվածում քննարկվում է անձի գործորդության (սուբյեկտության) և ժամանակային հեռանկարների փոխհարաբերությունը: Անձի ակտիվության հիմնախնդիրը տեսականորեն վերլուծել ենք կենսական ժամանակի հանդեպ վերաբերմունքի հետ կապի մեջ և փորձ ենք արել էմպիրիկ ճանապարհով ուրվագծել այդ կապի որոշ կողմեր: Հիմնվելով տեսական վերլուծության վրա և հաշվի առնելով գործորդության՝ որպես հոգեբանական բնութագրիչի բազմաչափությունը՝ նպատակահարմար ենք համարել հետազոտել այն ըստ հետևյալ երեք ցուցանիշների՝ ռեֆլեքսիվություն, ինքնավարություն և ընկալվող վերահսկողություն: Ժամանակային հեռանկարի ուսումնասիրման համար հիմք ենք ընդունել Ֆ. Զիմբարդոյի և Ջ. Բոյդի մոտեցումը՝ նրանց կողմից առաջ քաշված ժամանակային վեց հեռանկարները միավորելով երկու՝ ակտիվ և պասիվ խմբերում: Հաստատվել է գործորդության տարբեր բաղադրիչների և ժամանակային հեռանկարի առանձին տեսակների փոխկապվածությունը: Վիճակագրորեն հիմնավորվել ու շտկվել է ժամանակային հեռանկարները խմբավորելու ենթադրությունը: Աշխատանքում ցույց է տրված Հայաստանում երիտասարդների գործորդության հոգեբանական ուսումնասիրության արդիականությունը՝ ուրվագծելով հետագա ուսումնասիրության հեռանկարներ:

Հանգուցային բառեր: *գործորդություն, գործող անձ, կենսական ժամանակ, ակտիվ, պասիվ, ժամանակային հեռանկար:*

Ժամանակն այսօրվա մարդու անհատական գիտակցության մեջ ապրվում է որպես սեփականություն կամ դրա հնարավորություն՝ մի բան, որը կարող ես դարձնել առավելագույնս քոնը, բան, որը պետք է իմաստավորել, անցկացնել, կառավարել և այլն: Մի կողմից, ժամանակն օբյեկտիվ ու անշրջելի տրվածություն է, որն ընթանում, «անցնում» է՝ անկախ անձի ցանկություններից, ուստի թվում է՝ կարելի էր պասիվորեն ենթարկվել դրա հոսքին: Այս առումով դժվար է անգամ իմաստավորված գործով զբաղվելիս պնդել, որ այն մե՛ր ժամանակն է: Մյուս կողմից, մարդն ինքն է այդ ժամանակն ընկալում, այն բովանդակապես լցնում և յուրացնում (օրինակ՝ «ժամանակ չունեմ», «ժամանակս ինչի վրա եմ

ծախսում», «ժամանակ հատկացնեմ» և այլն) կամ խնդրականացնում, ինչպես մենք՝ այս աշխատանքում: Հետևաբար, ժամանակը կարելի է դիտարկել որպես մարդու՝ ազատորեն գործառելու, ընտրելու, ձևափոխելու և արարելու վարքը կազմավորող պայման: Ժամանակի ապրումը մշտապես շաղկապված է հույզերի հետ: Այսպես, ֆրուստացվելու զգացումը հաճախ բխում է մարդու այն մտքից, որ կենսական ժամանակը ճիշտ կամ արդյունավետ չի օգտագործվում, որ «չհասցրեց», «ժամանակին չարեց», «անիմաստ բաների վրա վատնեց» և այլն: Իհարկե, կենսական ժամանակի վերաբերյալ ապրումների վրա ազդեցություն են գործում նաև հասարակության կառուցվածքը ու սոցիալական ակնկալիքները՝ այն, թե ինչն է տվյալ մշակույթում և փուլում առաջադրվում մարդուն որպես ճիշտ և «ցուցված» կենսաձև կամ ձեռքբերում, և թե ինչպես են այդ ակնկալիքները «բաշխված» տարիքային առանցքի վրա:

Ժամանակի ընկալման այս երկդեմ բնույթը, որում սոցիալական-վերահսկելին ու ֆիզիկական-անվերահսկելին հատվում ու գոյակցում են, թույլ է տալիս նորովի դիտարկելու անձի սուբյեկտային ակտիվության կամ այլ կերպ ասած՝ գործորդության[3] հիմնահարցը: Մարդու՝ որպես գործող անձի հիմնախնդիրը կենսական ժամանակի հարցերի հետ փոխառնված է. ինչքանո՞վ և ինչպե՞ս է մարդը ներկայանում որպես կենսական ժամանակի ակտիվ ապրող, իրացնող և անգամ ստեղծող:

Ժամանակի նկատմամբ ակտիվ-պասիվ վերաբերմունքի ուսումնասիրությունը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում հենց ներկա հասարակական մարտահրավերների դիտանկյունից: Այսպես, հանրությունը մարդուց սպասում է գործորդություն (ակտիվություն, ընտրություն, ազդեցություն) և տարբեր, այդ թվում՝ զանգվածային մեդիայի, պոպ-մշակույթի և արվեստի միջոցներով տալիս նրան իր կյանքի ակտիվ ստեղծողը լինելու ուղերձը: Շատ այլ առումներով, սակայն հանրությունը ճնշում է անհատի այդպիսի դրսևորումները: Այս երկակի սպասելիքների համատեքստում ինչպե՞ս են հարաբերվում անձի գործորդությունը և կենսական ժամանակի նկատմամբ վերաբերմունքը բազմագործոն սոցիալական միջավայրում:

Ուսումնասիրությունն իրականացրել ենք երիտասարդների շրջանում: Մի կողմից, նրանք տարիքային յուրահատուկ խումբ են, որոնցից ակնկալվում է ակտիվություն, հեռանկարային նպատակներ, փոփոխությունների իրականա-

[3] Գործորդությունը հայալեզու հասարակագիտության մեջ վերջերս շրջանառվող համարժեքն է անգլերեն *agency* կամ *sense of agency* հոգեբանական հասկացության, որը նպատակահարմար ենք գտել կիրառել նաև հոգեբանության մեջ՝ սուբյեկտության (ռուսերենի «субъектность» բառի համարժեքի) փոխարեն: Վերջինս միայն խիստ վերապահումով է արտահայտում ակտիվորեն (ներ)գործող անձի իմաստը: Սուբյեկտ հասկացությունը և՛ փիլիսոփայական, և՛ ստուգաբանական վերլուծության մակարդակում խնդրական է, քանի որ միաժամանակ ներառում է և՛ ակտիվ, և՛ ենթակա լինելը, և այդ առումով շեղվում է ագենտ հասկացության իմաստային բեռից:

ցում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում և այլն: Մյուս կողմից, սակայն, երկրի հասարակական-մշակութային առանձնահատկություններն այնպիսին են, որ նույն երիտասարդների ազատության դրսևորումները և փոփոխությունների ձգտումը հաճախ ճնշվում են: Կարելի է ասել, որ երիտասարդությունը նաև նոր փորձարկումների ու այդ իմաստով՝ գործորդության «վարժեցման» շրջան է, որը կարող է խրախուսվել կամ խոչընդոտվել: Երիտասարդներից շատերի՝ տարբեր հասարակական իրադարձությունների մասնակցության ձգտումը ևս առնչություն ունի գործորդության զգացումի հետ:

Այսպիսով, ուսումնասիրության առանցքում անձի գործորդության և ժամանակային հեռանկարի փոխհարաբերությունն է: Այս երկու բնութագրերի առնչությունը քիչ է ուսումնասիրված, իսկ Հայաստանում բացակայում են անգամ դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ առանձին հետազոտություններ: Տարբեր մոտեցումների շրջանակներում հաշվի է առնվում ժամանակային հեռանկարի հնարավոր դերը անձնային տարբեր կոնստրուկտների, օրինակ՝ դրդապատճառների, իմաստային ոլորտի ձևավորման գործում: Փորձելով հասկանալ ժամանակային հեռանկարի հիմքում ընկած անձնային բնութագիրը՝ մենք որպես այդպիսին առաջարկում ենք դիտարկել գործորդությունն՝ իբրև ներհոգեկան համընդգրկող ռեսուրս: Ստորև անդրադառնանք գործորդություն ու ժամանակային հեռանկար հասկացությունների քննարկմանը՝ տեսական և էմպիրիկ չափումների տեսանկյունից:

Գործորդություն, սուբյեկտություն. Ինչպես ծանոթագրության մեջ նշել ենք, «գործորդություն» հասկացությունը նախընտրել ենք «սուբյեկտություն» հասկացությանը, և դրա համարժեք տերմինն անգլիալեզու հոգեբանության մեջ «ագենտությունն է» կամ ագենտության զգացումը (agency, sense of agency): Վերջինս ավելի միանշանակորեն, քան սուբյեկտ բառը, հղում է անհատի ունակությանը՝ լինելու ակտիվ գործող անձ և իրացնելու միջավայրի վրա ազդելու իր հնարավորությունը և ոչ՝ սոսկ ճանաչելու այն [5]: Այնուհանդերձ, վերլուծության մեջ ներառել ենք նաև այն ռուսալեզու աղբյուրները, որոնցում կիրառվում է «սուբյեկտություն» եզրը, քանի որ քննարկվող խնդիրն, ըստ էության, նույնն է: Ընդհանրացված ձևակերպմամբ՝ գործորդությունն այն բանի նախա-ռեֆլեքսիվ կամ իմպլիցիտ գիտակցումն է, որ գործողություն կատարողը կամ մտադրության հեղինակը ես եմ: Այլ կերպ ասած՝ գործորդն ունի կամային գործողություններ կատարելու կարողության զգացում, հենց ինքն է այդ գործողությունների ձեռնարկողը, իրականացնողն ու վերահսկողը [9, էջ 15-17]: Գործորդության զգացումը սոցիալ-հոգեբանական իմաստով սերտորեն կապված է նաև սոցիալ-քաղաքական կյանքի վրա ներգործելու կարողության համոզմունքի հետ [10]: Գործորդությունը չի կարող բնութագրել անհատին առհասարակ՝ առանց միջավայրի հետ նրա կոնկրետ փոխազդեցության: Միայն փոխազդեցության կոնկրետ իրավիճակի նկատմամբ կարելի է ասել՝ արդյոք անհատն այդ հարաբերության ամբողջական սուբյեկտ է, թե ոչ [5, էջ

146]: Հենց սրանում էր, օրինակ, Ռոլո Մեյը տեսնում մարդու հիմնարար երկընտրանքը: Մարդը կարող է իրեն զգալ և՛ սուբյեկտ, և՛ պասիվ օբյեկտ. ընդ որում կարևոր են երկուսն էլ, քանի որ «այս երկու բևեռների միջև դիալեկտիկական շարժումն էլ պայմանավորում է մարդկային գիտակցության զարգացումը, խորացումը և ընդլայնումը» [մեջբերված է՝ ըստ 5, էջ 147]: Ստացվում է, որ որպես խնդիր գործ ունենք «արտաքին և ներքին գործընթացների վրա ակտիվ ներազդեցության՝ ժամանակի մեջ փոփոխվող չափի հետ՝ ներառյալ արտաքին ակտիվության ակտիվ զսպումը» [5, էջ 147]:

Տարբեր մոտեցումների վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել գործորդության հետևյալ հատկությունները՝ ինքնապատճառականության և վերափոխման ունակություն, ակտիվություն, ընտրության ազատություն և պատասխանատվություն վերջինիս համար, ինտենցիոնալություն և նպատակաուղղվածություն, ռեֆլեքսիվություն, ինքնակարգավորում և ինքնավարություն [4; 5; 8, էջ 63-103]: Ինչպես նկատում ենք, գործորդության համատեքստում անուղղակիորեն ուրվագծվում է ժամանակային կառուցվածքավորման հիմնախնդիրը. անձը գործելիս առաջնորդվում է ապագայի որոշակի տեսլականով, կարող է ունենալ ապագայի մի քանի հնարավոր տարբերակներ և փորձել իրացնել դրանցից կամայականը:

Ժամանակային հեռանկար. Հոգեբանության մեջ «ժամանակային հեռանկար» հասկացությանը սկզբնապես անդրադարձել է Կուրտ Լևինը: Ըստ նրա՝ մարդու կենսական տարածությունը ներառում է ոչ միայն աշխարհագրական և սոցիալական միջավայրը, այլև ունի ժամանակային չափողականություն: Մարդու ընկալած ներկայի վիճակը անմիջականորեն կապված է նրա սպասելիքների, ցանկությունների, անցյալի և ապագայի պատկերացումների հետ: Ապագայի և անցյալի այսպիսի ներառվածությունը ներկայում հենց ժամանակային հեռանկարն է: Հոգեբանական ներկան, անցյալը և ապագան կազմում են տվյալ պահին գոյություն ունեցող հոգեբանական դաշտի համաժամանակյա մասերը [3, էջ 95]:

Ժամանակային հեռանկարը հիմք է ստեղծում մի շարք գործընթացների համար, ինչպիսիք են նպատակադրումը, նախագծումն ու ծրագրումը, հավակնությունների մակարդակը, նախաձեռնողականությունը և այլն: Բացի այդ, անցյալի, ներկայի և ապագայի ապրումը նպաստում է անձնային այնպիսի բնութագրերի արտահայտմանը, ինչպիսիք են սուբյեկտիվ վերահսկողության մակարդակը, ինքնավերաբերմունքը, ինքնահիրացման արժեհիմաստային կողմերը և այլն [6]: Ըստ երևույթին, ժամանակային հեռանկարն արտացոլում է ոչ միայն ապագա նպատակներն, այլև գործորդության մակարդակը, քանի որ հոգեբանական իմաստով գործ ունի հատկապես սեփական անելիքների վերաբերյալ համոզմունքների և ոչ թե՝ դրանց փաստացի իրագործման հետ: Գործորդությունն իր հերթին, կապված լինելով մարդու ինքնակարգավորման ու ինքնապատճառականության հետ, ենթադրում է ժամանակային հեռանկարը

որոշարկելու ունակություն: Ինքնագործ անձը որոշում է իր արածներն ու անելիքները, դրանցում տեսնում է իր ազդեցությունը: Ապագայի մոդելի ձևավորումը և ժամանակային տիրույթի ամբողջական իմաստավորումը ոչ այլ ինչ է, քան գործորդության դրսևորում: Ընդ որում, տեսականորեն առաջ քաշված այս ենթադրությունը կարևոր նշանակություն ունի մեր աշխատանքի համար:

Հիմնախնդրի տեսական վերլուծությունը նպատակահարմար է եզրափակել դրա ուսումնասիրման գործում մեծ ներդրում ունեցած Ֆ. Զիմբարդոյի և Ջ. Բոյդի մոտեցմամբ: Ըստ նրանց՝ ժամանակային հեռանկարն «անձի չգիտակցված վերաբերմունքն է ժամանակի նկատմամբ և գործընթաց է, որի օգնությամբ գոյության երկարատև հոսքը միավորվում է ժամանակային կատեգորիայում, ինչն էլ օգնում է կարգավորել մեր կյանքը, կառուցվածքավորել և իմաստավորել այն» [1, էջ 58]: Ժամանակային հեռանկարն արտացոլում է ժամանակի հետ կապված դիրքորոշումները, համոզմունքները և արժեքները: Զիմբարդոյի կարծիքով՝ բավական կայուն անհատական միտում կա՝ սևեռվել ժամանակային որոշակի լոկուսի վրա, ինչն էլ հանգեցնում է ժամանակային հեռանկարի կոնկրետ տեսակի ձևավորմանը: Զիմբարդոն ու Բոյդն առանձացրել են ժամանակային հեռանկարի վեց տեսակներ՝ ըստ ժամանակային տիրույթի երեք բաղկացուցիչների՝ անցյալի, ներկայի, ապագայի.

- նեգատիվ անցյալ և պոզիտիվ անցյալ,
- ֆատալիստական ներկա և հեդոնիստական ներկա,
- ապագայի կողմնորոշվածություն և տրանսցենդենտալ ապագա:

Այս մոտեցման կարևոր հասկացությունը «հավասարակշռված ժամանակային հեռանկարն է», որին համապատասխանում են դրական ժամանակային հեռանկարների՝ պոզիտիվ անցյալի, հեդոնիստական ներկայի և ապագայի կողմնորոշվածության բարձր մակարդակ, նեգատիվ անցյալի, ֆատալիստական ներկայի և տրանսցենդենտալ ապագայի ցածր մակարդակ [1, էջ 307-309]: Ինչպես տեսնում ենք, հեղինակները ժամանակային հեռանկարների մի մասն են հակված համարել դրական: Սա հիմք ընդունելով՝ առաջարկում ենք ժամանակային վեց հեռանկարները դիտարկել գործորդության դրսևորման տեսանկյունից: Այս առումով պոզիտիվ անցյալը, հեդոնիստական ներկան և ապագայի կողմնորոշվածությունը կմիավորվեն ակտիվ ժամանակային հեռանկարի խմբում՝ ցույց տալու համար, թե ինչքանով է մարդն իր անցյալի փորձը համարում զարգացման նախադրյալ, հաճույք ստանում ներկայում և կառուցում ապագայի պլաններ: Իսկ այն, որ անցյալի փորձը կարող է ունենալ բացասական երանգավորում, որ ներկա իրադարձությունները կարող են համարվել կանխորոշված, իսկ ապագան՝ դիտվել որպես մահից հետո կյանքի հնարավորություն, թույլ է տալիս նեգատիվ անցյալի, ֆատալիստական ներկայի և տրանսցենդենտալ ապագայի հեռանկարները միավորել պասիվ ժամանակային հեռանկարի խմբում:

Ակտիվի և պասիվի տարբերակմամբ մտադիր ենք դիտարկել, թե հեռանկարներից յուրաքանչյուրում ինչպե՞ս և որքանո՞վ է ի հայտ գալիս սուբյեկտ-գործողը: Ժամանակային հեռանկարների այսպիսի խմբավորումը դրվել է հետազոտական աշխատանքի մեթոդաբանության հիմքում:

Հետազոտության մեթոդաբանություն. Հետազոտության հիմնական նպատակն է եղել պարզել ժամանակային վեց հեռանկարների և գործողության առանձին բաղադրիչների միջև փոխկապվածությունը, ինչպես նաև որոշել ժամանակային հեռանկարներն ակտիվ և պասիվ խմբերում միավորելու նպատակահարմարությունը: Ենթադրել ենք, որ ժամանակային ակտիվ հեռանկարները՝ պոզիտիվ անցյալը, հեդոնիստական ներկան և ապագայի կողմնորոշվածությունը, փոխկապված են գործողության բարձր մակարդակի հետ, իսկ պասիվ ժամանակային հեռանկարները՝ նեգատիվ անցյալը, ֆատալիստական ներկան և տրանսցենդենտալ ապագան՝ գործողության ցածր մակարդակի հետ:

Հաշվի առնելով, որ գործողության՝ որպես հոգեբանական առանձին բնութագրիչի ուսումնասիրումը կոնկրետ իրավիճակից դուրս խնդրային է, մեր հետազոտության շրջանակներում այն չափվել է անուղղակիորեն՝ գործողին բնորոշ առանձին որակներ պարզորոշող մեթոդիկաների համադրմամբ: Հետազոտության շրջանակներում որպես գործողության ցուցանիշներ ենք ընտրել ռեֆլեքսիվությունը, ընկալվող վերահսկողությունը (անձնային, միջանձնային և սոցիալ-քաղաքական) և ինքնավարությունը, որոնց համար կիրառվել են հետևյալ հարցարանները՝

Վ. Կարանդաշևի ռեֆլեքսիվության հարցարանը՝ նախատեսված ռեֆլեքսիվության ընդունակության ուսումնասիրման համար [2, էջ 201-204]:

Ընկալվող վերահսկողության սանդղակը (Scale of Perceived Control) [7, էջ 49-50], որը գնահատում է վերահսկողության երեք ոլորտներ կամ բաղադրիչներ՝ անձնային, միջանձնային և սոցիոքաղաքական:

Ա. Լազուրկինի՝ անձի ինքնաիրացման որոշման թեստը (САМОАЛ), որից գործածել ենք միայն ինքնավարության սանդղակը՝ ելնելով աշխատանքի նպատակներից:

4. Ֆ. Զիմբարդոյի, Ջ. Բոյդի՝ ժամանակային հեռանկարի (ZTPI) և «Տրանսցենդենտալ ապագա» ժամանակային հեռանկարի (TTPI) հարցարաններն՝ ուղղված ժամանակային երեք լոկուսների նկատմամբ անձի վերաբերմունքների համակարգի որոշմանը, որտեղ՝

Նեգատիվ անցյալ. արտահայտում է սեփական անցյալի չընդունման աստիճանը, որն առաջացնում է հիասթափություններ: *Պոզիտիվ անցյալ.* արտահայտում է սեփական անցյալի ընդունման աստիճանը, որի դեպքում ցանկացած փորձ համարվում է զարգացմանը նպաստող փորձ, որը հանգեցնում է ներկա վիճակին: *Հեդոնիստական ներկա.* ներկան դիտարկվում է անցյալից և ապագայից կտրված, միակ նպատակը հաճույքն է:

Ֆատալիստական ներկա. ներկան դիտարկվում է անձի կամքից անկախ՝ նախապես կանխորոշված, իսկ անձը՝ ճակատագրին ենթարկված: *Ապագային կողմնորոշվածություն.* արտահայտում է անձի մոտ ապագայի պլանների և նպատակների առկայությունը: *Տրանսցենդենտալ ապագա.* բնութագրում է այն մարդուն, ում արարքներն ուղղված են մահվանից հետո կյանքին [1, էջ 61-69]:

Հետազոտական տվյալները վերլուծվել են IBM SPSS Statistics v.21.0 վիճակագրական ծրագրով: Կիրառվել են կորելյացիոն (r-Pearson, r-Spearmen) և գործոնային վերլուծության մեթոդները: Հետազոտական ընտրանքը բաղկացած է 62 հոգուց՝ 19-26 տարեկան երիտասարդներ (39 աղջիկ և 23 տղա)4: Հետազոտությունն իրականացվել է 2016 թ. փետրվար-ապրիլ ամիսներին, ք. Երևանում:

Արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն. Գործորդության առանձին գործոնների և ժամանակային վեց հեռանկարների միջև նշանակալի կորելացիոն կապեր են դուրս բերվել, այդ թվում.

անձնային վերահսկողության և նեգատիվ անցյալի միջև բացասական փոխկապվածություն (r=-0,317, p=0,012),

անձնային վերահսկողության և ֆատալիստական ներկայի միջև բացասական փոխկապվածություն (r=-0,318, p=0,012),

անձնային վերահսկողության և ապագայի կողմնորոշվածության միջև ուժեղ դրական փոխկապվածություն (r=0,538, p<0,000…),

սոցիոքաղաքական վերահսկողության և պոզիտիվ անցյալի միջև դրական փոխկապվածություն (r=0,266, p=0.037),

ռեֆլեքսիվության և նեգատիվ անցյալի միջև դրական փոխկապվածություն (r=0,311, p=0.014),

ինքնավարության և ֆատալիստական ներկայի միջև բացասական փոխկապվածություն (r=-0,284, p=0,025),

ինքնավարության և ապագայի կողմնորոշվածության միջև բացասական փոխկապվածություն (r=-0,314, p=0,013),

Ռեֆլեքսիվության և նեգատիվ անցյալի միջև դրական փոխկապվածություն (r=0,311, p=0.014):

Արժեքավոր ցուցանիշ է անձնային վերահսկողության և ապագայի կողմնորոշվածության նշանակալի դրական փոխկապվածությունը, որը կյանքի տարբեր ոլորտներում գործորդության դրսևորման հետագա հետազոտությունների ու մեկնաբանումների դաշտ է բացում:

Ուշագրավ է նաև առանձին վերցված սոցիալ-քաղաքական վերահսկողության և պոզիտիվ անցյալի փոխկապվածությունը: Պոզիտիվ անցյալը ինքնահաստատման հենակետ է, թույլ է տալիս մարդուն օգտագործելու իր անցյալը՝

[4] Ենթադրվում է, որ ստացված հետազոտական արդյունքներն ավելի բնութագրական են աղջիկներին:

որպես ներկայում և ապագայում զարգացման փորձ, զգալու շարունակական կապ ընտանիքի, մշակութային ավանդույթների, սեփական արմատների հետ [1, էջ 296-297]: Եթե վերը նշվածը դիտարկենք հանրային մասշտաբով, ապա պոզիտիվ անցյալի բարձր մակարդակը թույլ է տալիս անցյալի զարգացման փորձն օգտագործելով՝ ավելի բարձր սոցիալական ներգրավվածություն ունենալ: Այս երկու գործոնների փոխկապվածության հետագա՝ այս աշխատանքի շրջանակներից դուրս ուսումնասիրությունը, կարծում ենք, արժեքավոր նշանակություն կունենա Հայաստանում հանրային մի շարք երևույթներ և ընկալումներ բացատրելու և մեկնաբանելու համար՝ պոզիտիվ և նեգատիվ անցյալի համատեքստում:

Կարելի է նաև նկատել, որ ինքնավարությունը շաղկապվել է ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ ժամանակային հեռանկարների հետ, և այս անհետևողական արդյունքը կարող է բխել ոչ այնքան կոնստրուկտի, որքան դրա չափման համար ընտրված մեթոդիկայի անհամապատասխանության խնդրից, ուստի հոդվածի շրջանակներում այս տվյալները լրացուցիչ չեն մեկնաբանվի:

Ռեֆլեքսիվության և նեգատիվ անցյալի միջև փոխկապվածությունն ամբողջացնում է ստացված արդյունքները: Բանն այն է, որ բարձր մակարդակի ռեֆլեքսիվությունը կարող է նպաստել իրավիճակի տևական ու բազմակողմանի վերլուծությանը՝ խոչընդոտելով անձի վճռական գործելակերպը. սուբյեկտը շատ է մտածում իրավիճակի տարբեր ասպեկտների մասին, սակայն չի դիմում գործողությունների [4], այլ կերպ ասած՝ չի օգտագործում անցյալի փորձը զարգացման համար, ինչպես պոզիտիվ անցյալի պարագայում: Հետևաբար ռեֆլեքսիվությունը գործորդության հետ կապի տեսակետից միանշանակ չէ ու դրա դիտարկումը որպես գործորդության բնութագիր վիճարկելի է, ինչը կարևոր տեսական ու էմպիրիկ ճշգրտում էր մեր հետագա աշխատանքի համար:

Ժամանակային վեց հեռանկարները ակտիվ և պասիվ խմբերում միավորելու նպատակահարմարությունը պարզելու համար լրացուցիչ իրականացվել է գործոնային վերլուծություն5: Մի գործոնի մեջ են միավորվել ֆատալիստական ներկան (0,829), նեգատիվ անցյալը (0,648), հեդոնիստական ներկան (0,638) և տրանսցենդենտալ ապագան (0,580). անվանենք այն

5 Գործոնային վերլուծությունն իրականացվել է Գլխավոր բաղադրիչների (Principal components) մեթոդով՝ Varimax շրջման կիրառմամբ: Ընտրված փոփոխականների համար գործոնային վերլուծության անցկացման ադեկվատությունը ստուգվել է Կայզերի և Բարտլետի ոլորտայնության չափանիշներով (KMO. Kaiser-Meyer-Oikin Measure of sampling Adequacy and Bartlett test of sphericity)՝ մեր տվյալների համար p=0,000, ինչը թույլ է տալիս հաշվի առնել ստացված արդյունքները: Ներկայացված են միայն յուրաքանչյուր գործոնում միավորված փոփոխականների գործոնային կշիռները (factor loadings) ցույց տվող արդյունքները:

պասիվ ժամանակային հեռանկարների խումբ: Երկրորդ գործոնի մեջ միավորվել են ապագայի կողմնորոշվածությունը (0,764) և պոզիտիվ անցյալը (0,753), որն էլ ըստ էության ժամանակային հեռանկարների ակտիվ խումբն է: Այսպես, գործոնային վերլուծությամբ բովանդակային առումով ճշգրտվել է ժամանակային հեռանկարները երկու խմբերում միավորելու մեր մոտեցումը:

Այսպիսով, այս աշխատանքի արդյունքում հաջողվել է դուրս բերել գործորդության տարբեր բաղադրիչների և ժամանակային հեռանկարի առանձին տեսակների փոխկապվածությունը: Ցույց է տրվել, որ ժամանակային հեռանկարի այն տեսակներում, որոնք ավելի պասիվ բնույթ ունեն, գործորդության դրսևորման մակարդակը ցածր է, իսկ ժամանակային հեռանկարի այն տեսակները, որոնք անձի ինքնապատճառականության հետ են կապված, ենթադրում են գործորդության բարձր մակարդակ: Տեսականորեն առաջադրվել և վիճակագրական վերլուծության արդյունքում հիմնավորվել է ժամանակային հեռանկարները ակտիվ և պասիվ խմբերում միավորելու մեր մոտեցումը, ինչը, կարծում ենք, հետագա ուսումնասիրությունների համար օգտակար նշանակություն կարող է ունենալ:

Հարկ է նշել, որ ամբողջական հետազոտության էմպիրիկ տվյալների միայն մի հատվածն է այստեղ վերլուծվել՝ առավելապես հիմնախնդրի ուսումնասիրման ուղղությունները ուրվագծելու նպատակով: Գործորդությունն, անշուշտ, բաղադրյալ և էմպիրիկ ուսումնասիրման համար ոչ ամենադյուրին բնութագրերից է, որի հոգեբանական հասկացման համար անհրաժեշտ են նաև խորքային որակական ուսումնասիրություններ, տեսական հետագա մշակումներ:

Ներկայացված հետազոտությունն իր տարբեր կողմերով դաշտ է բացում արդի Հայաստանում ապրող երիտասարդի գործորդության հետագա հոգեբանական ուսումնասիրությունների համար՝ ինչպես տեսական-մեթոդաբանական, այնպես էլ էմպիրիկ մակարդակներում: Այդ ուղղությամբ որոնումները կարող են նշանակալի լինել հենց մեր երկրի ներկա սոցիալ-քաղաքական իրավիճակի հասկացման համար: Այսպես, ամիսներ առաջ տեղի ունեցած հեղափոխական շարժման ընթացքում հենց երիտասարդներն էին՝ որպես գործորդ, լայնորեն մասնակցում և անգամ որոշում սոցիալ-քաղաքական փոփոխությունը, փողոցները դարձնում իրենց գործորդության իրացման տարածքներ՝ հաճախ հղում անելով սեփական ապագային և դրանից բխող անհրաժեշտ մասնակցությանը: Այս առումով, լրացուցիչ ուսումնասիրության է արժանի նաև անհատական և կոլեկտիվ գործորդության փոխառնչությունը:

Գրականություն

1. **Зимбардо Ф., Бойд Дж.** Парадокс времени. Новая психология времени, которая улучшит вашу жизнь / [Пер. с англ. О.Гатановой] — СПб.: Речь, 2010, 49с.

2. **Ишков А.Д.** Учебная деятельность студента: психологические факторы успешности: Монография.-М.: Издательство АСВ, 2004.-224 с.
3. **Левин К.** Теория поля в социальных науках.: Пер. с. англ.- СПб.: «Сенсор», 2000.-368 с.
4. **Леонтьев Д.А. Аверина А.Ж.** Феномен рефлексии в контексте проблемы саморегуляции [Электронный ресурс] // Психологические исследования: электрон. науч. журн. N 2(16), 2011.
5. **Леонтьев Д.А.,** Что дает психологии понятие субъект: субъектность как измерение личности // Эпистемология и философия науки, т. 25. № 3, 2010.
6. **Проконич О.А.** Динамические характеристики временной перспективы личности студентов вуза в процессе обучения. // Современные исследования социальных проблем (электронный научный журнал), №1(45), 2015.
7. **Arburn D. B.** "Development and Validation of a Scale of Perceived Control Across Multiple Domains" // PCOM Psychology Dissertations. 37, 2004, 72p.
8. **Davidson D.** Essays on Actions and. Events. Clarendon Press, Oxford, Second Ed., 2002, 324 p. // https://bibliotecamathom.files.wordpress.com/2012/10/essays-on-actions-and-events.pdf (30.09.2018).
9. **Gallagher, S.** Philosophical conceptions of the self: Implications for cognitive science. // Trends in Cognitive Sciences, 2000, 4(1), 14–21.
10. **Watts, R., Guessous, O.** Sociopolitical Development: The Missing Link in Research and Policy on Adolescents. // Beyond Resistance! Youth Activism and Community Change: New Democratic Possibilities for Practice and Policy for America's Youth. Ginwright, S., Noguera, P. & Cammarota, J. (Eds.), Routledge Publishing, 2006, pp. 59-77.

АГЕНТНАЯ ЛИЧНОСТЬ И ЕЕ ВРЕМЕННАЯ ПЕРСПЕКТИВА: ПОПЫТКА ЭМПИРИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ

Манусян С. О., Григорян А.К.(ЕГУ, Ереван, РА)

В статье рассматривается взаимоотношение между агентностью (субъектностью) личности и ее временной перспективой. Теоретически анализируется проблема активности личности в ее соотнесенности с отношением личности к жизненному времени, эмпирически исследуются некоторые аспекты этой взаимосвязи. На основании анализа литературы и принимая во внимание многомерность понятия субъектности, мы предлагаем ее изучение с помощью трех признаков ее проявления: рефлексивности, автономности и воспринятого контроля. Методологически основываясь на концепции временной перспективы Зимбардо и Бойда, мы объединили определенные ими шесть временные перспективы в две группы - активные и пассивные. Также

выявлены значительные корреляции между проявлениями субъектности и отдельными временными перспективами. Результаты указывают на актуальность психологического изучения субъектности армянской молодежи, намечая дальнейшие пути и контексты исследования.

Ключевые слова: *субъектность, субъект (агент), жизненное время, временная перспектива, активная временная перспектива, пассивая временная перспектива.*

PERSONAL AGENCY IN TIME PERSPECTIVE. AN ATTEMPT OF EMPIRICAL STUDY

Manusyan S.H., Grigoryan A.K. (YSU, Yerevan, RA)

The article discusses the interrelation between personal agency and time perspective. The problem of human activity has been theorized in its relatedness with attitudes towards life time, while also outlining some aspects of that relation based on analysis of select empirical data. With multi-dimensionality of the concept of agency and difficulty of its empiricizing in mind, we have proposed to study it through three characteristics indicative of sense of agency based on literature review: reflexivity, autonomy and perceived control. We have proposed to group 6 time perspectives as in Zimbardo and Boyd's model into two – active and passive. Empirical support, as well as statistical adjustment has been found for this grouping. Interrelation between indicators agency and select time perspective types has been confirmed. The analysis concludes with arguing for relevance of psychological investigation into the sense of agency of Armenian youth, and landmarks possible pathways of such research.

Key words: *(sense of) agency, agent, life time, time perspective, active time perspectives, passive time perspectives.*